ԱՐՄԻՆԵ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու
ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն, դեկան, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման գործընթացը անընդհատ նորոգվող ու բարեփոխվող ճանապարհ է: Այս ընթացքում դասի գործառույթը կարելի է համարել հաջողված, եթե խոհեմ և հմուտ ուսուցիչը կարողանում է մասնագիտական նյութի և մեթոդական գրականության մեջ անընդհատ վերափոխվող ուսուցման ձևերի ու մեթոդների ճիշտ համադրում կատարել:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ. հոգեբանական դաշտ, գրական կերպարի հոգեվերլուծություն, ազգային հոգեբանություն, ազգային հոգեկերտվածք:

Այսօր բարեփոխումների ճանապարհ անցնող ուսուցման մեթոդական դաշտը բազմազան է և բազմատարր: Ուսուցիչը պետք է կարողանա ուսուցման մեթոդի, ձևի ճիշտ ընտրություն կատարել՝ պայմանավորված ուսուցանվող նյութով և թեմայով: Ուսուցման ձևերից հետաքրքիր են միջառարկայական կապերը, որոնք նպաստում են դասի բովանդակալից և արդյունավետ դարձնելուն: Միջառարկայական կապերը կարող են լինել տարբեր զուգահեռներով՝ գրականություն-պատմություն, գրականություն-փիլիսոփայություն, գրականություն-արվեստ, գրականություն- հոգեբանություն և այլն: Գրականություն-հոգեբանություն կապը պետք է կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որտեղ սյուժետային դիպաշարում գերիշխում են հերոսների բարդ հոգեբանական անցումները, դրամատիկ պահերը, հոգեվիճակների յուրօրինակ դրսևորումները: Գրականություն- հոգեբանություն կապը պետք է կիրառել մի քանի մոտեցումներով.

1. Ազգային հոգեբանություն
2. Ժամանակաշրջանի հոգեբանություն
3. Գրողի հոգեբանություն

Աշակերտակենտրոն ուսուցումը պահանջում է ուսուցանվող նյութի մատուցման և ընկալման ճանապարհին աշակերտի՝ որպես ինքնուրույն ստեղծագործող և պրպտող ուժի արժևորում: Այսինքն՝ ուսուցիչը ինքը ուսուցանվող թեման ամբողջությամբ չպետք է մատուցի, այլ միայն շեշտադրի ելակետային խնդիրները, ցույց տա դրանց լուծման ճանապարհները, իսկ աշակերտը դրանց հիման վրա պետք է հետազոտական և ստեղծագործական աշխատանք կատարելուց հետո հասնի ուսուցանվող թեմայի ամբողջական ընկալման: Ուսուցման այս ընթացակարգը ուսուցիչը պետք է պահպանի հատկապես հոգեբանական տարրերի հագեցվածությամբ ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, շեշտադրի կերպարների վերլուծման մոտեցումները, ուղղորդի դեպի կերպարի հոգեվերլուծության նախակետը, որից հետո աշակերտը ինքնուրույն փորձի բացահայտել գրական հերոսների հոգեկերտվածքը, հոգեբանական դաշտը: Կերպարի արժևորման առաջին ելակետային մոտեցումը պետք

է լինի ազգային հոգեբանության դիտանկյունից: Այսինքն՝ ուսուցիչը պետք է բացատրի, որ յուրաքանչյուր գրող կերպարակերտման ճանապարհին հաշվի է առնում հերոսի ազգային արժեհամակարգը, ազգային մտածողությունն ու հոգեկերտվածքը, ազգային կեցության ինքնատիպությունն ու առանձնահատկությունները, որովհետև միայն այս դեպքում գրական կերպարը կլինի ճշմարտացի և տիպական: Ուրեմն՝ ուսուցիչը պետք է ուղղորդի աշակերտին կերպարի բնութագրումն ու արժևորումը կատարել ելակետային այս մոտեցմամբ:

Երկրորդ ելակետային մոտեցումը ժամանակաշրջանի հոգեբանության շեշտադրումն է: Յուրաքանչյուր գրող, պայմանավորված իր ապրած ժամանակաշրջանի գաղափարախոսությամբ, պատմական այդ ժամանակահատվածի մարդկային հարաբերությունների հոգեբանական ընկալումներով և բարոյական արժևորումներով, իր հերոսներին ամբողջացնում է տվյալ դարաշրջանի հոգեբանական մտայնության քուրայում: Օրինակ՝ 19-րդ, 20-րդ, արդեն 21-րդ դարի գրողը նույն հոգեկերտվածքի կրողը չէ. քաղաքակրթությունը, մարդկային մտքի նվաճումները իրենց հետքն են թողնում ժամանակաշրջանի մարդու հոգեբանական նկարագրի վրա: Հատկապես քաղաքական-հասարակական տեղաշարժերը փոխում են մարդու արժեհամակարգը, աշխարհայացքը, ուստի յուրաքանչյուր դարաշրջան իր հոգեբանական առանձնահատկությունները ունի: Ուսուցիչը պետք է բացատրի, որ 21-րդ դարի քաղաքացին իր մտածողությամբ և հոգեկերտվածքով շատ է հեռացել նախորդ դարերի մարդուց, ուստի այսօր՝ 21-րդ դարի հեռավորությունից, նախորդ դարաշրջանում ստեղծված գրական երկերը վերլուծելիս պետք է ժամանակաշրջանի հոգեբանության դիտանկյունից մոտենալ խնդրին:

Երրորդ ելակետային մոտեցումը գրողի հոգեբանությունն է: Յուրաքանչյուր գրող իր անհատական հոգեկերտվածքով, իր մարդկային որակներով, իր մտածողությամբ ինչ-որ չափով ազդում է իր կերտած կերպարների վրա՝ որոշ չափով նրանց դարձնելով իր մի մասնիկը: Ուրեմն՝ ուսուցիչը պետք է բացատրի, որ մինչ գրական կերպարներին անդրադառնալը պետք է ուսումնասիրել գրողի կենսագրությունը, նրա նամակները, ժամանակակիցների հուշերը, դրանց օգնությամբ հնարավորինս թափանցել գրողի ներաշխարհը, գտնել կերպարի սնուցման հոգեբանական ակունքները: Գրականություն-հոգեբանություն միջառարկայական կապի այս մոտեցումը հատկապես պետք է կիրառել քնարական ստեղծագործությունների, բանաստեղծությունների վերլուծության ժամանակ, որովհետև բանաստեղծական պատկերը սյուժետային զարգացումներ չունի, այն գրողի ներքին հոգեվիճակների դրսևորումն է, ուստի բանաստեղծական խոսքի ներքին շերտերը թափանցելու համար պետք է իմանալ, թե գրողը բանաստեղծական երկունքի պահին ինչ հոգեվիճակում է եղել, և որքանով են դրանք արտացոլվել բանաստեղծության մեջ: Ելակետային այս մոտեցմամբ պետք է ուսուցանել Չարենցի « Ծիածան» ժողովածուն:

«Ծիածան» ժողովածուն ծնունդ էր Չարենցի անձնական հուզապրումների, հոգեբանական վայրիվերումների: Ուստի «Ծիածան» ժողովածուի ելակետային սիմվոլներ հանդիսացող գույների հոգեբանական շերտերի քննարկումը պետք է կատարել՝ բացահայտելով բանաստեղծի անձնական հույզերի դաշտը, որը կենարար ակունքն էր ժողովածուի բանաստեղծությունների համար: «Ծիածան» ժողովածուում գույն-պատկեր սիմվոլների եռաշերտ համակարգը պետք է դիտարկել բանաստեղծի անձնական հույզերի, հոգեվիճակների զուգահեռ վերլուծությամբ: Պատկերը և սիմվոլը բանաստեղծության լեզվական կառուցվածքի արտաքին և ներքին

մակարդակներն են: Այսինքն՝ պատկերսիմվոլ անցումային ենթաշերտերում բանաստեղծի ներաշխարհի հուզային թրթիռներն են, արտաքին աշխարհի հզոր ազդակները: Չարենցյան գույնսիմվոլները բազմաշերտ են և բազմատարր: Դրանց հոգեբանական շերտերը բացահայտելու համար ուսուցիչը պետք է նշի, որ «Ծիածանը» նվիրված է բանաստեղծի աստղային քրոջը՝ Կարինե Քոթանճյանին, որի հանդեպ Չարենցը մեծ սեր էր տածում, ուստի ժողովածուի գույն-սիմվոլների՝ բանաստեղծական պատկերների տողատակերում խտացված հոգեբանական շերտերը դիտարկելու համար պետք է հասկանալ՝ հարաբերությունների ինչ ընթացք էր նրանց մոտ ժողովածուի բանաստեղծական երկունքի պահին: Ըստ Կարինե Քոթանճյանի՝ «Ծիածան»-ը գրվել է Մոսկվայում, իսկ մինչ Մոսկվա գնալը արդեն նրանց միջև կային հույզերի և հոգեբանական ապրումների որոշակի դրսևորումներ: Կարսի այգում մի քանի հանդիպումները խորհրդավոր երիտասարդի հանդեպ արդեն հետաքրքրություն էին առաջացրել Կարինեի մոտ, և նա ցանկանում է ծանոթանալ այդ երիտասարդի հետ, որը ընկերները տարօրինակ են համարում: «Նրանց տարօրինակ թվաց այդ տարօրինակ տղայի հետ մտերմանալու առաջարկը, սկզբում ծիծաղեցին, հետո հայտարարեցին, որ ստիպված կլինեն ընկերություն չանել ինձ հետ, չար է տղան, և իրենք չեն պատկերացնում մտերմություն նրա հետ: Ես համառեցի և մեր ընկերներից մեկի ուղեկցությամբ մոտեցանք Եղիշեին: Ձեռքս մեկնելով առաջարկեցի նրան ծանոթներ լինել: Թերևս ծաղր համարելով իմ առաջարկը, նա ծույլ շարժվեց տեղում, արժանապատվությամբ բարձրացավ, և մենք ծանոթացանք»: [1] Եվ այդ ծանոթությունը վերածվեց խորհրդավոր մտերմության. « միշտ միասին էին լինում, միասին զբոսնում, նավակ նստում, զրուցում ժամերով»: Այնուհետև ճակատագրի դաժան հանգամանքների բերումով նրանք բաժանվում են միմյանցից. երկրի ծանր քաղաքական իրավիճակը երկուսին էլ իր հորձանուտն է տանում: Չարենցը կամավորական ջոկատներով հասնում է մինչև Վան, տեսնում պատմական հայրենիքի արյունոտ ողբերգությունը, իսկ Կարինեն, որի զինվոր դառնալու ցանկությունը ծնողները արգելում են, դառնում է գթության քույր՝ մասնակցելով Թումանյանի կողմից կազմակերպված որբերի օգնության աշխատանքներին: Այս ծանր ու մղձավանջային ճանապարհն անցնելուց հետո երկուսն էլ հայտնվում են Մոսկվայում: Կարինեն այնտեղ էր բուժման նպատակով, հետո նրա խորհրդով Մոսկվա է մեկնում նաև Չարենցը: Եվ վայելումի երանելի ամիսներ... Չարենցը Մոսկվայում հաճախում է Շանյավսկու համալսարանի բանասիրական ֆակուլտետ որպես ազատ ունկնդիր: Այս շրջանում նա մասնակցում է գրական երեկոների, շփվում ռուս մտավորականների հետ: Բնականաբար այս մթնոլորտում նրա գրական որոնումները էլ ավելի պեպք է խորանային սիմվոլիստական աշխարհում, որովհետև այդ ուղղությունը իշխող էր 20-րդ դարասկզբի ռուս գրականության մեջ: Այսինքն՝ սիմվոլային համակարգը դառնում է գրողի ներաշխարհի բացահայտման միջոց: «Սիմվոլային համակարգը», որը տարրալուծված է ողջ կառուցվածքի մեջ, պատկերավոր ասած՝ բանաստեղծի « հոգու քարտեզն է» , որով պետք է կողմնորոշվի ընթերցողը՝ մուտք գործելու նրա «միջուկի» մեջ, շփվելու նրա «ներքին իրականության», ճանաչելու նրա մտքերի և զգացմունքների ճշգրիտ հոսքը՝ արտատպված տվյալ սիմվոլային համակարգի մեջ: Ընթերցումը /այս իմաստով՝ վերլուծությունը/ ստեղծագործական պրոցեսի հակադարձ շարժումն է, երբ բացահայտվում են մինչ այդ ստեղծված սիմվոլ -պատ-

1 Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, «Սովետական գրող» , 1986թ., էջ 43:

կերները՝ ընդհուպ մինչև հանդիպումը բանաստեղծական այն իրականությանը, որտեղից սկսվել է սիմվոլի առաջացումը»: [1] Ուրեմն՝ չարենցյան գույն – սիմվոլի հոգեբանական շերտերը բացահայտելու համար պետք է գտնել բանաստեղծական այն իրականությունը, որտեղից կենսական լիցքեր են ստացել շարքի բանաստեղծությունները: Ընդհանրապես սիմվոլ-պատկերը բանաստեղծական խոսքի մեջ դուրս է գալիս բառի իրական իմաստային սահմաններից՝ գրավելով հուզապրումի և հոգեվիճակի լայն տարածական դաշտ: Չարենցյան եռագույն ծիածանը դառնում է բանաստեղծի այդ օրերի հոգեկան ապրումների բանաստեղծական ծնունդը. կապույտ, ոսկի, մանուշակագույն-երեք գույն, երեք հոգեվիճակ, հույզերի եռաշերտ տրոհում: Ըստ հոգեբան Կ. Յունգի՝ «Արխետիպերը հոգեկան կառուցվածքում մնացած մինչգիտակցական պատկերացումների և աշխարհի նախնական ընկալման հետքերն են, որոնք, դուրս մղվելով գիտակցության ավելի կատարյալ ձևերի կողմից, անցնում են հոգեկան աշխարհի «անգիտակցական ոլորտը» և հանդես գալիս իբրև սիմվոլներ: Բանաստեղծի կողմից «արխետիպերի» արթնացումը և նրանց սիմվոլիկ ձևերի հայտնաբերումը, որ տեղի է ունենում ստեղծագործական պրոցեսում, նշանակում է «ետադարձ շարժում» դեպի գիտակցության պարզունակ նախնական ձևերը, վերադարձ ներկայից դեպի անցյալ, դեպի «սկզբնապատկերը», որը գիտակցության համար հանդես է գալիս իբրև սիմվոլ»:[2] Ուսուցիչը պետք է բացատրի, որ գրողը բանաստեղծական ներշնչանքի պահին, երբ միտքը ենթագիտակցական-մինչգիտակցական-գիտակցական անցման ճանապարհին է, անցյալից ներկա ետադարձ շարժման շնորհիվ ներկայի մեջ վերապրում է անցյալում մնացած հույզերը, որոնք դառնում են այդ պահի սիմվոլ-խորհրդանիշեր: Չարենցի համար մինչ Մոսկվա գալը Կարինեի հետ հարաբերությունների հոգեբանական դաշտը կապույտն էր: Այսինքն՝ սիրո կայացման նախնական փուլում գերիշխում է կապույտը, երբ սերը աստղային քրոջ կերպարով ճախրում է երկրի կապույտում, այն դեռևս հողեղեն չէ, այն տիեզերական, աստվածային, անմարմին, եթերային տեսիլք է, ցնորք, պատրանք:

Կապույտը սիրո հոգեբանական անցումների մաքրամաքուր ակունքն է, «կապույտը հոգու աղոթանքն է», իսկ սիրահար հոգին, սիրելիին տենչացող սիրտը իր աղոթքներում նրան է տեսլացած փնտրում, որը դեռևս աստղե ոլորտներում է: «Կապույտը-կարոտ թափանցիկ, մաքուր, ու հստակ, ու ջինջ» . կապույտի ալիքներում գալարվում է սիրատենչ հոգին սիրելիի կարոտից, իսկ այդ կարոտը անեղծ է, որովհետև կապույտ քրոջ աչքերում շողացող սերը աղոթքի կանչող զանգի պես հզոր է ու ամենակարող: Սիրահար սրտից հորդացող հույզերը կապույտի տիեզերական անսահմանության մեջ անծայրածիր տարածքներ են գրավում՝ «երկնքից երկինք»: Ու սիրելիին տենչացող հոգին անսանձ կրքերից «կապույտի լաբիրինթոսում դառնում է սրբացած կնիք»: Սիրո մաքուր ալիքներում, կապույտի տիեզերական տարածքներում սրբանում է ամեն մի տարր, մաքրագործվում է աշխարհը, ու այն , ինչ պետք է հաջորդի կապույտին՝ սիրո կայացումը, դառնում է լուսավոր եզերք, հոգու ցնծություն:

Մոսկվայում արդեն, երբ սիրահար սրտերն այդքան մոտ էին, սերն իջել էր տիեզերական կապույտի հոգեբանական տարածքներից, դարձել էր նյութեղեն, և հագուրդ էր ստացել սիրո ծարավից տոչորվող սիրատենչ հոգին: Եվ սիրո «լուսավոր գինու» այրող ալիքներում ձուլվում են երկինքն ու երկիրը, մարմինն ու հոգին, երազն ու իրականությունը,

1 Հենրիկ Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևան, 1986թ.,էջ 26:

2 К. Юнг, Психологические типы, М, 1924, с.90:

ցնորքն ու պատրանքը, ու փշրվում է կապույտը, անէանում սիրո հորդացող ալիքներում. կապույտից հետո բացվում է արևի ոսկին՝ սիրո դրսևորման հոգեբանական հաջորդ շերտը՝ որպես սիրո վայելումի խորհուրդ: Սիրո հոգեբանական անծայրության մեջ տեսանելի է դառնում հույզերի մյուս եզերքը՝ ոսկին՝ որպես սիրո կայացման և անափ կրքերին հագուրդ տալու զորավոր վայրկյան: Բռնկվում է սիրո հրդեհը, առկայծում է սիրո կայացման «հրաշքի շղթան, շղթան ոսկեգույն»՝ որպես սրտի, հոգու, մարմնի սիրո ալիքներում միաձուլվելու սուրբ վայրկյանի խորհուրդ, վայրկյան, որի փոթորկուն ալիքներում փշրվում են արդեն հեռուներում՝ երազի թևերին, մնացած կապույտի անարատության, մաքուր մենության թրթիռները: Բռնկումի վայրկյանի մեջ արդեն անցյալ է դառնում անբիծ կապույտի խորհուրդը , սիրուց այրվող աչքերում հաջորդ վայրկյանին «ոսկու շշուկ է, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ...» : Սեր ու բոց, կիրք ու կրակ, հրայրք ու հրդեհ միաձույլ են ոսկու ալիքներում, իսկ երբ հանդարտվում են հրդեհված հույզերի ալիքները, «Հոսում է ոսկեծուփ կապույտից դեպի վար՝ Արտերի գիրկը բերրի ՝ մի հեշտություն հրավառ» : Հանդարտվում են սրտի փոթորկումները, աստեղային ոլորտներից մինչև երկրային տարածքներ ձգվող հույզերը սիրահար հոգուն անբացատրելի, անմեկնելի զգացողությունների գիրկն են տանում: Սիրո կրակներում « խանձված հոգին» մի պահ դատարկվում է, կապույտն ու ոսկին՝ սիրո երազն ու սիրո վայելումը, դառնում են հեռուներում մնացած տրտում մի հուշ... Կապույտից հետո և ոսկուց հետո սիրահար հոգում փռվում է «մի խամրած մշուշ մանուշակագույն»: Սիրո կայացման ճանապարհի այս հոգեվիճակի՝ մանուշակագույնի խորհրդի յուրօրինակ բացատրությունն են տալիս ստոիկյան փիլիսոփաները: Ըստ ստոիկների՝ ցանկացած երազանք, ցանկություն, որը նախնական վիճակում դեռևս անհասանելի է, կրում է խորհրդավոր, աստվածային անբացատրելի զգացողությունների ուժ, իսկ երբ այն տիեզերական ոլորտներից իջնում է երկրային տարածքներ, դառնում իրականություն, այն կորցնում է իր առեղծվածային ուժը, անմեկնելի խորհրդավորությունը: Այդ է պատճառը, որ ստոիկյան փիլիսոփաները գտնում են, որ ավելի լավ է երազել ու չհասնել, որպեսզի չճաշակել երազանքի վայելումից հետո եկող տխուր զգացողությունը՝ աստվածայինից դեպի առօրեական իրողության ընկալումը: [1] Մոսկովյան սիրո վայելումի ամիսները Չարենցին տանում են տխուր մանուշակագույնի աշխարհ, ու բանաստեղծը ցգում էր, « որ միայն երկինքներում կուսական բռնկումները բոլոր նվաղեցին ու հանգան»: Այլևս չկային աստեղային ոլորտներում թևածող երազները, անմեկնելի հույզերն ու կրակները մարեցին երկրային հոգեվիճակների լուսավոր ալիքներում:

Բանաստեղծի հոգին չէր կարող երկար մնալ խամրած մանուշակագույնի հույզերի դաշտում, նրա հոգին ծարավ էր ճախրանքի, տիեզերական տարածքներում ալեվետումների, իսկ հոգու թռիչքի ծարավը նրան պիտի տաներ նոր կապույտների աշխարհ՝ նոր սերերի գիրկը՝ Արմենուհի Տիգրանյան, Լյուսի Թառայան, Արփենիկ Աստվածատուրյան, Իզաբելլա Կոդաբաշյան, որոնք հետո պիտի որպես երազների Նավզիկե՝ « նայադների նման կարոտների ձայնով կանչեին նրան, խոստանային սիրո անհատնելի հմայք, բայց թողնեին միայն մորմոք ու կորստի կսկիծ»:

Գրական երկի նման վերլուծության ընթացքում կիրառելով գրականություն-հոգեբանություն միջառարկայական կապը՝ ուսուցանվող նյութը կստանա ավելի խորքային ընկալում աշակերտների կողմից, դասը կդառնա ավելի հետաքրքիր, բովանդակալից և արդյունավետ:

1 Антология мировой философии,том 1,М.,1969с.45

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հենրիկ Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևան, 1986թ.:
2. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Երևան, « Սովետական գրող» , 1986թ.:
3. Антология мировой философии, том 1,М.,1969:
4. 4. К. Юнг, Психологические типы, М, 1924:

МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ, ЛИТЕРАТУРА И ПСИХОЛОГИЯ

АРМЕНУИ АРЗУМАНЯН

Доцент кафедры новейшей литературы Ереванского государственного университета, кандитант филологических наук.

НАИРА АКОПЯН

Декан Международного научно-образовательного центра НАН РА, доктор психологических наук, профессор

Сегодня педагогические методики, находящиеся на пути преобразований, многообразны и многосоставны. Учитель должен уметь выбрать правильный метод обучения в зависимости от темы и обучающего материала. При обучении необходимо учитывать межпредметные связи, позволяющие сделать урок более содержательным и плодотворным. Литературно-психологические связи следует использовать при изучении таких произведений, где сюжетных последовательных действий больше, чем драматических моментов u своеобразных проявлений душевного состояния.

INTERDISCIPLINARY LINKS: LITERATURE AND PSYCHOLOGY

ARMENUHI ARZUMANYAN

Associate Professor of the Chair of the Armenian Modern Literature, Yerevan State University, PHD in Philological Sciences

NAIRA HAKOBYAN

International Scientific-Educational Center of the NAS RA, Dean, Doctor of Psychological Sciences, Professor

Nowadays teaching methodology which undergoes reformations is various and multi-faceted. Teachers should be able to choose the right method of teaching due to the subject-matters and materials. It is important to pay attention on inter-disciplinary relations which help to make the lesson more substantial, productive and learner-oriented. The ties between Literature and Psychology should be applied while studying fiction, where succession of events is more than dramatic and there exist a range of moments and special expressions of emotional state.